Ա. ՏԱՐԻ　　ՇԱԲԱԹ 4 ԱՊՐԻԼ 1925　　ԹԻԻ 4

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷ
«Ա. Պ Տ Ա Կ»
Պուլ. Հր. Պոթէֆ 224—Սոֆիա

ԲԱԺԱՆԵԳԻՆ

| | տարեկ. | վեցամս. |
|---|---|---|
| Պուլկարիա | 120 | 70 լեվա |
| Արտասահման | 30 | 17 ֆր. |

# ԱՊՏԱԿ

## ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
## ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԵՐԳԻԾԱԿԱՆ

„АБДАГЪ“
Бул. Хр. Ботевъ 224—София

„ABDAG“
Bld. Hristo Boteff 224
SOFIA (Bulgarie)

ԳԻՆ 2 ԼԵՎԱ　　Չհրատարակուած ձեռագիրները ետ չեն դրկուիր　　ԳԻՆ 2 ԼԵՎԱ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

## Ս. ԶԱՏԻԿԸ

Շաբաթէ մը ի վեր Սոֆիայի հայութիւնը եւ ազգային մարմինները իրար անցած են. տակնուվրայութիւն մը, անօրինակ քոն ու քոն մը կը նշմարուի ամէնուրէք. ժողովներ կը գումարուին, կոչեր ու շրջաբերականներ իրարու կը յաջորդեն: Ս. Զատիկը երբ պիտի տօնենք, 12՞ին թէ 19՞ին: Ահա դրդապատճառը բոլոր այն վիճաբանութեանց, հրապարակային գայթակղութեանց եւ անպատուաբեր վարմունքներուն որոնց ականատես կամ ականջալուր եղաւ տեղւոյն հայութիւնը:

Որքա՜ն դառն է մեզի համար՝ տօնական օրերու առթիւ, փոխանակ մեր սիւնակները կրօնական հոգեշունչ եւ բարոյացուցիչ յօդուածներու յատկացնելու՝ ստիպուած անդրադառնալ անտեղի եւ փողոցային գռեհկութեանցը կարգ մը անոպայ մարդոց, որոնք հեռո՜ւ ոեւէ կրօնական կամ ազգասիրական զգացումէ, լոկ շահային եւ անձնական գձուձ հաշիւներով տոգորուած կը յանդգնին կրօնքը իրենց գործիք դարձնել եւ վատասերած հոգիի մը բոլոր մաղձը դուրս թափել:

Ճիշդ տեղն է ըսել, ո՜վ կրօնք ինչ՛ ոճրագործութիւններ կը գործուին քու անունովդ: Աստուծոյ Որդին՝ Որ աշխարհի խաղաղութեան համար խաչուեցաւ, Որ համեստութիւն եւ հեզութիւն կը ցոլացնէր իր անձին վրայ եւ Որ խաղաղութեան խորհրդանշան ձիթենիի ճիւղը ձեռքին Երուսաղէմ մտաւ, արդեօք այն Յիսուսը որքա՜ն դառն ցաւ եւ տխրութիւն կ՚զգայ՝ Իր Ս. Յարութիւնը շաբաթ մը առաջ կամ վերջը տօնելու պատրուակաւ՝ պարզուած տգեղ տեսարաններէն:

Հիմա կը հարցնենք հակընդդէմ կողմերուն, ի՞նչ շահ եւ ի՞նչ օգուտ ունեցան իրար անպատուելով, մէկզմէկ վիրաւորելով. միթէ անոնք բոլորը միեւնոյն ազգին զաւակները չե՞ն, միթէ նոյն ցաւերը չե՞ն բաժներ, նոյն ուրախութիւնները չե՞ն զգար։

Աւա՜ղ, ինչպէս միշտ այս անգամ եւս քինախնդրութիւնը, նեռաւոր թաքուն հպատակներ կուրցուցած էին զիրենք: Բայց բաւական է այլեւս, մէկդի ձգենք անձնական նկատումները ու հակառակութիւնները. այո, լաւ է գաղափարի պայքարը սակայն պէտք է զգուշանալ [illegible] հակառակորդի դերին մէջ գտնուելէ. քիչ մը հեռատեսական ըլլանք եւ գիտնանք գլուխ խոնարհեցնել:

## ԱՆՑՆՈՂ ՇԱԲԱԹԸ

Զատկի տօնախմբութեան հրատապ հարցը.—Մեր մասնաւոր քննութիւնը.—Դեր ու դէմ կարծիքներ.—Ներկայ կացութիւնը։

*Անցնող եօթնեակի ընթացքին, Սոֆիայի հայոց խօսակցութեան միակ նիւթն էր և առկախ ին կը շարունակէ ըլլալ, Ս. Զատկի տօնախմբութեան հարցը։ Կրօնական ամլութեանց հակէն սովորաբար անտարբեր եղող այս համայնքը՝ խիստ գերագրգռուած ըլլալ կը թուի, իր ջերմեռանդ հաւատացեալի զգացումները վիրաւորուած կ՚զգայ, կ՚ըմբոստանայ և բողոքի ձայն կը բարձրացնէ։ Խանութներու մէջ թէ սրճարաններու անկիւնը միեւնոյն յանկերգը կը լսուի 12ի՞ն թէ 19ի՞ն...։*

*Որպէսզի մեր ընթերցողները խնդրոյն մանրամասնութեանց տեղեակ դարձնենք, յարմար դատեցինք այդ մասին ազգային ձեռնհաս շրջանակներու մօտ քննութիւն մը կատարել, որուն արդիւնքը ստորեւ կը հաղորդենք։*

*Մօտաւորապէս երկու շաբաթ առաջ, քաղաքիս Թաղ. Խորհուրդը պաշտօնական գրութեամբ մը Թեմական Խորհուրդին կը հարցնէ թէ Զատիկը Ապրիլ 12ի՞ն թէ 19ի՞ն պէտք է տօնել։ Թեմական Խորհուրդը նկատելով որ խնդիրը իր ձեռնհասութենէն վեր է, Թաղ. Խորհուրդի կողմէ իրեն ուղղուած նամակի հիման վրայ բոլոր թեմերուն շրջաբերական մը կը գրկէ անոնց կարծիքը առնելու համար։ Թեմերը՝ ի բացառեալ Վառնայէն՝ —այսպէս բացատրուեցաւ մեզի— 19ին տօնելու համաձայնութիւն կը յայտնեն, որուն վրայ Թեմական Խորհուրդը Բ. շրջաբերականով մը ամէն տեղ կը յանձնարարէ 19ին տօնել Զատիկը։ Մինչ այս մինչ այդ Պուլկարիոյ Առաջնորդական փոխանորդ Տէր Սարգիս հայրը, հեռագրով ամէն տեղ կիմացնէ թէ ըստ օրացոյցի 12ին պէտք է տօնել, և հակառակ պարագային կ՚սպառնայ պատարագիչ քահանաները անձնապէս պատասխանատու նկատել։*

*Հոս միջանկեալ կերպով ըսենք թէ՝ ինչպէս կը տեսնուի՝ խնդրոյն սկզբնական քայլը սխալ առնուած է. պարզապէս պատասխանատու մարմիններու իրենց անձեռնհասութեան պատճառաւ, և այնքան դիւրութեամբ լուծելիք հարց մը այսօր մեծամեծ գայթակղութեանց դուռ բացած և կորդեան հանգոյցի վերածուած է։*

*Անցեալ կիրակի օր, Մարտ 29ին եկեղեցական արարողութեանց ա-*

(Շար. տես Դ. էջ)

# ԿՈՉ

Թաղ. Խորհուրդս նկատի ունենալով տեղային հանգամանքները ու պահանջքները, որ դարերէ ի վեր Օրթոտոքսներու հետ տօնած ենք Ս. Զատիկը եւ մէկ անգամէն անջատումը լաւ չպիտի ազդէ մեր Պուլկար եղբարց վրայ եւ միեւնոյն ատեն նկատելով որ մեր դրացի երկու տէրութեանց՝ Ռումանիոյ եւ Յունաստանի մէջ գտնուած երէք բարձրաստիճան Եպիսկոպոս Առաջնորդները, նոյն նպատակաւ եւ շրջահայեցողութեամբ, որոշած են Ս. Զատիկը տօնել Ապրիլ 19 ին, որոնք ըստ օրինի Ս. Էջմիածնայ Գերագոյն ժողովի անդամներն են, նաեւ Ս. Երուսաղէմայ Սրբազան Պատրիարք Ամեն. Տ. Եղիշէ Սրբազանն ալ պիտի տօնէ Ապրիլ 19 ին: Մենք եւս այդ օրինակներէն թելադրուած եւ գաւառներէն հասած նոյնիմաստ փափաքները նկատի առնելով, ժողովրդեան կրօնական ջերմեռանդութեան զգացում տալու եւ հոգեւոր մխիթարութենէ չզրկելու համար, որոշեց Ս. Զատիկը տօնել Ապրիլ 19 ին որն որ հաղորդուած է արդէն հոգեւոր վերին իշխանութեանց, թէ Ս. Էջմիածին եւ Պոլսոյ Պատրիարքութեան:

Սոֆիա 2 Ապրիլ 1925

ԹԱՂ. ԽՈՐՀՈՒՐԴ

## ՆԱՏԻՏԷ ՀԱԼԱԾ

### ԾԱՆՈՒՑՈՒՄ

Տալարէ մը վերջ հալած պիտ կարգեմ
Խրեակի փարչա է կեցէք ըի պատմեմ.
Թիպ մը խոտորկեկ չիրիք տոմարէս.
Եսնախներ ըսես տաղդաներու պէս,
Սանկ խայլիով մը պըտըտիմ կըսես.
Պայլըն պախըրը հիչ մի հարցներ՝
Քանի նաթիլներ գուիլէ են եղեր.
Պայլխնի Դառնիկը մեծ ծուկերու տէր.
Խարու ալէլտային վրան է բլլխեր.
Պէռանին մօտ եա լուղըններ կուգես.
Անուշ կը հոտի նիմիշի մը պէս.
Մէյմը տեսնողը ինքը իր օտան.
Պիտի բըռցունէ խելքին գլխանան.
Պանախներն ըսես է սլըղըլ սլըղըլ.
Զըրօզ պայըխին անկից է բօմպոլ.
Մօտայի ըսես թէք մերակը է.
Խըլլօզ մանտիլը փէշէն կը կախէ.
Ասանկ Նատիտէ հալածի համար.
Էրիկ մը տալը ես գտայ յարմար:

Ս. ԻԶՄԻՐԼԵԱՆ

# ԲԱՑ ՆԱՄԱԿ

Առ
Տ. Խորէն Ս. Քհնյ. Ճամճեանի
Աստ

Ստորագրեալս, երբ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ ամենայետին մէկ ծառան կուգամ հրապարակաւ մը քանի հարցումներ ուղղել Ձեզ, խնդրելով որ քաջութիւնը ունենաք հրապարակաւ պատասխանելու։

Ա. — Անցեալ կիրակի առաւօտ (Մարտ 29 ին) յետ աւարտման Ս. Եկեղեցւոյ գումարել տուիք Ընդհ. ժողով մը, լուծելու համար այնպիսի հարց մը (որը Ս. Կաթողիկոսը լուծերէ ժամանակին) որպիսին էր Ս. Զատիկը Ապրիլ 12 ին թէ 19 ին տօնելու պէս բարդ խնդիր մը։ Իրաւասութիւն ունէի՞ք գումարելու այսպիսի ժողով մը և թէ ներկաները (որոնցմէ շատերը պատահաբար գտնուած էին հոն) իրաւունք ունէի՞ն լուծելու (զուտ կրօնական եղող) յիշեալ հարցը։

Բ — Կրնա՞ք հրապարակել անունները այն 50 ծխականներուն որոնք գրած են Ձեզ որ Ս. Զատիկը փոխանակ Ապրիլ 12 ին, 19 ին կատարուի, և այս տեսակ պահանջք մը ի՞նչ արժէք կրնայ ունենալ։

Գ. — Ինչո՞ւ կարեւորութիւն չտուիք Պուլկարիոյ Առաջ. Տ. Սարգիս Հօր կոչմանը, Ձեզ ուղարկուած հեռագրին։

Դ — Քանի որ Ս. Զատիկը փոխանակ Ապրիլ 12 ին 19 ին ալ կրնար ըլլալ, ինչո՞ւ հրապարակաւ պարսաւեցիք այն ամեն հայերը, որոնք փոխանակ Յուն. 6 ի Յուն. 7 ին տօնեցին Ս. Ծննդեան տօնը։

Սոֆիա, 31 Մարտ 1925

ԵՐՈՒԱՆԴ ՏԷՐՄԵՍՐՈՊԵԱՆ

(Լէկլ. Տիմօֆ Բազար թիւ 10)

Խմբագրութիւնս ցաւելով հանդերձ որ խնդրոյ առարկայ եղած է քաղաքիս հոգեւոր հովիւը սոյն նամակով՝ յանուն անկողմնակալութեան տեղ կուտայ անոր՝ յուսալով որ հետաքրքրուողները պէտք եղած բացատրութիւնները ու լուսաբանութիւնը պիտի տան, հանդարտեցնելու համար հանրային գայթակղեալ կարծիքը։

ՔԻՉ ՄԸ ԹԱՏԵՐԱԿԱՆ

# ԽԼԻՉ ԳՈՎԱՆ

(Տար. Նախորդ թիւէն)

Եւ այս ամէնքը յիշելով չը պիտի ծածկեմ այն խորին կսկիծը թէ Աշխարհի բոլոր գիտական, պատմական, վիպական անցքերու և բարքերու ինքնախրատ հայելին եղող այդ բարձր դպրոցին Թատրոնին պատկանող բոլոր անոնք, բացի մի քանի բացառութիւններէ, բոլորն ալ ապրած հողիներ Եպիսէ հովանիին տակ են զովացած և այդ միջոցով օձիքնին ազատած..

Ինչպէ՞ս չհիմանք և չօրհնաքինք Պուլկար ժողովուրդին վրայ, որ պարծանքի արժանի փութկոտութեամբ կանգնեց «Նարօտէն Թէատրօ»ի նման լուսաւորութեան հսկայ տաճարը և շատ քիչ ժամանակի մէջ հասցուց և քաջալերեց այնքան պարծանքի արժանի արուեստագէտներ։

Շատ նեղ պիտի գան Ազդակին այս սիւնակները, եթէ մի առ մի յիշելու ըլլանք այն արգելքները թէ՝ ինչո՞ւ Արուեստի տուն մը հաստատելու համար եղած ջանքերը միշտ ամլութեան և անյաջողութեան են մատնուած։

Մեր հայ-լայֆին այս մասին ցոյց տուած անհոգութիւնը և անբարեացակամութիւնը իրաւ ամօթ մըն է, Պուլկար ժողովուրդին քով, որ այնքան գերազանց կարեւորութիւն և վերաբերմունք կը ցուցնէ գեղարուեստի մասին, մեր ունեւորներուն անտարբերութիւնը առաջ կու գայ մինչ այն սա պատճառով, անոնք հակառակ իրենց ճոխ նիւթական կարողութեան ու փայլուն դիրքին, արուեստին շատ հեռու են մնացած տեսնելու այս դրացի պահանջը որ պէտք է վերագրել հասկացողութեան և ընդունակութեան պակասին, որոշ պէտք հեռացնել թէ (բացառութիւնները միշտ յարգելով) շատերը չեն գիտեր։

Թէ՝ նոյն խիկկայ օրով գիտութիւն մը ապրելակերպի, ինչպէս նաեւ խնջոյքներու, պարահանդէսներու գիւանագիտական երեկոյթներ (սաւաէ տիբլօմաթիք) և պաշտօնական ընդունելութեանց մէջ ըլլալիք բոլոր պատշաճ ձեւակերպութիւններու։ (Առ թէաթրալը կ

սալօւա փիլաւը) չը կարդացողները պէտք է երթան յաճախեն Թատրոն ուր կը տեսնուին գործնականապէս բոլոր վերի յիշածներս։

Արդար ըլլալու համար ըսենք, և արդէն մոռնանչելու ալ հարկ չկայ բացայայտ իրողութիւն մընէ թէ Ֆիլիպէի հայութիւնը գերազանցած է Սօֆիան, հոն ըլլայ ընկերական կեանքի մէջ ըլլայ ազգային և անհատական, բարեկամեցողութիւն, եռանդ և աշխատութիւն կայ, Ֆրանսերէն առածը կըսէ (վուլուար սէ բուվուար) և Ֆիլիպէի հայերը կը տեսնուի թէ կամեցող են այժ ունին։ Ֆիլիպէն ոչ միայն ունի զանազան միութիւններ ինչպէս գեղարուեստականը, ունի նաև Ազգ. Բեմ, որան, բաւական ներկայանալի հոս Սօֆիա ի՞նչ ունի, «Յառաջ» միութեան լըսարանը, պարզ և չուկալիք, ի՞նչ ըրին Սօֆիայի հարուստները, այս անունին տակ համախմբուած խել մը ժրաջան երիտասարդներու ջանքերուն փոխարէն, կաղանդին փողոցէ փողոց պտըտելով խեղճերը սիմիթ ծախեցին, ի՞նչու… որովհետև տարբեր միջոցներով փօնտ կազմելու հնարաւորութիւնը դուրս չեկաւ, հակառակ թափուած ջանքերու և դիմումներու։

Ինչո՞ւ Սօֆիան ալ չ՚ունենայ գոնէ Ֆիլիպէին չափ, և ինչո՞ւ Նըլլ Գովան և ուրիշներ չիգա՞ն փայլեցընել իրենց տաղանդը և հանճարը։ Ի՞նչ ըրաւ Սօֆիան Պր. Շահխաթունիին. այդ արուեստագէտը, մեր ներկայանալի դերասանը, որ պանծացուց հայ արուեստը պուլկար բեմին վրայ, և շնորհիւ պուլկար ժողովուրդին չափազանց գեղարուեստասիրութեան, նպաստի և ողջերթի ներկայացում մը կազմակերպեց առանց որուն գուցէ մերայնոց կամաւոր նուիրատուութեամբ պիտի հարկադրուէր ելնել Սօֆիայէն չէ՞…

Չէ ես կը ճանչնամ Պր. Շահխաթունին ան չի պիտի գլուխ ծռեր այդ արժանապատուութիւն վիրաւորող ժեստին։

Եւ ի լրումն ամէնայնի ինչ գեղեցիկ առածներ ալ սորված են մեր թատրասէրները, իրաւ է թէ՝ մուրացկանի նման իրենց ոտքին դիմել կուտան արուեստի մարդը ու յետոյ կըսեն «մուրացկանին ողորմութիւնը տուր աղտոտածին մի խառնուիր» ով Սօֆիայի հայ թատերապաշտ .. ժողովուրդ յո՞ երթաս։

ՍՏՈՒԵՐ

**ԲԱՑՈՒԱԾ Է ԱՊՏԱԿԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ**

# ԹԷ ՈՒՐ ՊԱԼԸԽՃԻ ԳԱՌՆԻԿ

## ԿԸ ՀԱՆԴԻՊԻ ԾՈՎՈՒ ԱՂՋԿԱՆ

Ինչպէս գիտէք կար ամէն օր ես հոս,
Մէհանէ կերթամ առանձին թիս քով,
Կուտեմ կը խմեմ լէճքս կը շնեմ,
Վախիտ եկաւ մի եաքախ կը մտնեմ:

Առտոս կանուխ խաղուէս կը խմեմ,
Վազելով կերթամ խայըխ կը՝ ցատկեմ,
Քուրէք քաշելով կը պացուիմ հեռուն,
Գտնելու համար եուվանի ծուկերուն:

Էբէյի հեռուն պացուեցայ այդ օր,
Բոլոր օր ծուկի րասթ չեկայ խաչոր,
Թամամ ես դառձիս մոտեցայ քէյին,
Զուզէք մի ծուկերը ինծ ընեն օյին:

Խարրնմոյի պէս պատեցին չորս դիս,
Խաչս հանելով Քրիստոս եարտըմհիս,
Ըսելով առի աղը իմ ձեռքիս,
Նետելով ջուրը ձեռք դրի գլխիս:

Էփէյի վախիթ վրայէն չանցաւ.
Փուրթունայ մըն է ծովուն մէջ փրթաւ,
Տալղա տալղայի ետեւէ կուգար,
Հոն տեղ կենալու հիչ ճարը չկար:

Ցանկարծ գլուխս դարցուցի ետիս,
Աղջիկ մը մըտերէ մէջը խայըխիս,
Պիւս պիւթին մերկ ամէն տեղ լոփ լոփ,
Ուրախութենէս ցատկեցի հոփ հոփ:

Իշտէ այդ վախիտ ես խելքէ ելայ,
Կամաց մը ծառքով երեսին դպայ,
Ուզեցի պաչիք շէվքալի առնել,
Զուզես մի ուզէ խաճայիս զարնել:

Եումրուխս սեղմած քալեցի վրան,
Ջիրա ան ինծի չի տուաւ քիրան,
Եախայիս փալաւ քաշեց քաշկռտեց,
Մինչեւ որ ինծի հուրին մէջ կոխեց:

Լողալով տարաւ ծովուն թախ տակը,
Վախէս յեցուցի անդրավարտիկը,
Խեղդեցի սեղմած էնքսէ քոքալին,
Արքնցայ տեսայ ծառքս չուքալին:

Զորսդիս նայեցայ չիկայ աղջիկը,
Ասանկ երազներ տեսնայ Գառնիկը:

ընդ. ՂԱՐԻՊ

ւարտումէն յետոյ քանի մը թաղականներ, ժամէն ելող ժողովուրդը և գլխաւոր դասը ժողովի մը կը հրաւիրեն որոշելու որ 12ի՞ն թէ 19ի՞ն պէտք է տօնել, նոյն ժողովին կը նախագահէր Սելանիկի առաջնորդ Տէր Երուանդ Եպիսկ. Փէրտահճեան որ իբրև հիւր քանի մը օրէ ի վեր Սօֆիա կը գտնուէր։ Եւ ահա այս ժողովին ընթացքին, խորհրդարանին մէջ, նախագահ սրբազանին և աւագ երէց հօր ներկայութեան՝ եկեղեցիի և կրօնական սրբութեանց անունով խօսող չարշըլը մարդիկ կ'սկսին փողոցային ամենաստորին հայհոյութիւններով զիրար վարկաբեկել, մէկզմէկ նախատել և... ծեծկուիլ, ձեռք բարձրացնել Աստուծոյ պաշտօնեային վրայ։ Եւ վերջապէս այս ժողովը կ'որոշէ Պատրիարքարան հեռագրել և հրահանգ ուզել, հեռագիրը կը քաշուի։ Չենք ուզեր աւելի շարունակել, միայն թող ընթերցող հասարակութիւնը ինք երևակայէ։

Ապրիլ 12ի դէպը պաշտպանողները կ'ըսեն թէ՝ նկատելով որ Ս. Կաթողիկոսին հաստատութեամբ պատրաստուած օրացոյցը Ս. Զատկի տօնախմբութեան թուական նշանակած է Ապրիլ 12ը, նկատելով որ կրօնական աւանդութեանց խանգարումը գէշ նախընթաց մը կրնայ ստեղծել, նկատելով որ եկեղեցական ոևէ մարմին իրաւասութիւն չունի հոգևոր գերագոյն իշխանութեան կարգադրութիւնները փոփոխելու՝ հետևաբար պէտք է Զատիկը տօնել Ապրիլ 12ին։ Իսկ 19ի ջատագովները իրենց տեսակէտը պերճախօս կերպով բացատրած են արդէն մամուլի կոչով մը զոր մենք ալ հրատարակած ենք մեր այս թիւին մէջ։

Ներկայ կացութիւնը՝ հակառակ Թաղ. Խորհուրդի որոշման՝ կը թուի անորոշ ըլլալ։ Մենք կը մաղթենք որ այս խնդրոյն շուրջ ցարդ պատահած անտեղի դէպքերը և վիճաբանութիւնները այլևս վերջ գտնեն ու մենք ալ մեր դրացիներուն և հիւրընկալներուն աչքին ծաղրելի չդառնանք։

ՍԻԼՈՒԷԹ

ԿԱՐԴԱՑԷՔ ԵՒ ՏԱՐԱԾԵՑԷՔ «ԱՊՏԱԿ»Ը

# ՓՈՔՐԻԿ ԼՈՒՐԵՐ

*** Կը լսենք թէ Վառնայի Ազգ. Երկս. Վարժարանի Ուսուցչական կազմը, Պր. Պաղտասար Ճիլէրնեանի նախկին աշակերտ աշակերտուհիները եւ համակիրները ձեռնարկած են տօնել Պր. Պաղտ. Ճիլէրնեանի ուսուցչական գործունէութեան յիսնամեայ յոբելեանը, Յունիս 7ին կիրակի օր։

Յոբելեարը բազմամեայ բեղուն գործունէութեան մը ունեցած է հայ մանկտոյն դաստիարակութեան վսեմ պաշտօնին մէջ, եւ իրեն ընծայուած այս յարգանքին ամէն կերպով արժանի է: Յոբելեանական յանձնախումբ մը կազմուած է արդէն Տիկ. Թ. Մանթաշեանի ատենապետութեամբ, որուն պէտք է ուղղուին ամէն նուէրներ եւ շնորհաւորական գրութիւններ, Վառնայի հայոց եկեղեցիին հասցէով։

*** Կը լսենք թէ տեղւոյս առժամեայ Թաղ. Խորհուրդի անդամներէն տիարք Ա. Սմբատեան եւ Կ. Գույումճեան հրաժարած են:

*** Անցեալ շաբթուան «Ապտակ»ին մէջ ծանուցած էինք եռանդամին մաս կազմող ազգայիններու անունները. այս անգամ կը լսենք թէ Պ. Յ. Փափազեան մերժած ըլլալով անդամակցիլ անոր տեղ նշանակուած է Պ. Գ. Այանեան:

*** Կը լսենք թէ Թեմական խորհուրդը դիմում կատարած է ոստիկանական տնօրէնութեան մօտ, որպէսզի իր յանձնարարագրերով ներկայացող գաղթականներու *Լիչնա Քարթա* տրուի: Նըպաստաւոր պատասխան մը առնուած է այս մասին:

## ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

*Պուրկազ*— Պ. Խորին շնորհակալութիւններ. Ձեր ուզած քանակութեամբ կ'ուղարկենք:

*Այթօս* — Ծիծօ, Գուրանին դրամը չենք ստացած եթէ կարելի է փութացուցէք:

*Շումէն*— Յ. Ս. «Վիշապին Սէրը» իբր թերթօն պիտի սկսի լոյս տեսնել:

## ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ



Ս. Զատկի առթիւ «ԱՊՏԱԿ»ը լոյս պիտի տեսնէ 6 էջով:

Այս առթիւ ուշադրութիւնը կը հրաւիրենք բոլոր հայ վաճառականաց, որ հաճին իրենց յայտարարութիւնները «ԱՊՏԱԿ»ին տալ։

Յայտարարութիւնք կ'ընդունուին հետևեալ պայմաններով

5-րդ էջի համար քվադրատ սանտիմէթրը 1·50 լէվա, իսկ մէկէ աւելի անգամներու համար 1 լէվա քվ. սանտիմէթրը։

6-րդ էջի համար 1 լէվա քվ. սանտիմէթրը. մէկէ աւելի անգամներու համար 80 սանթիմ քվ. սանտիմէթրը։

Փնտռտուքի համար 50 լէվա։

Վճարումը կանխիկ։

Ազգային և կրթական հաստատութիւններու համար ձրի։

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՓԱՍՏԱԲԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄՈՒՐԱՏՕՖ
ՍՕՖԻԱ
Գրասենեակ
ՔՕՕՓԷՐԱԹԻՎԷՆ ԹԸՐԿՈՎՍՔԻ ՏՕՄ 6 և 7
Հեռաձայն 2381
Բնակարան ՓՈՂՈՑ ԲՈՋԻԹԱՆՕ 12
Հեռաձայն Տէպր 105

ՏՊԱՐԱՆ „ԱՐԱՐԱՏ“
«ՑԱՐ ՍԻՄԷՕՆ» եւ «ՀՐԻՍԹՕ ՊՕԹԷՖ» 224
ՍՕՖԻԱ
Կը տպագրուին մաքուր և չափաւոր գիներով ամէն տեսակ գործեր՝ Հարսանեկան հրաւիրագիր, Այցետոմս, Նամակագլուխ, Պահարան, Պարտամուրհակ եւն.
Ամէն լեզուէ
ԴԻՄԵՑԷՔ ԳՈՀ ՊԻՏԻ ՄՆԱՔ
ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ Կ'ԸՆԴՈՒՆՈՒԻՆ
ԿԱՆԽԱՎՃԱՐՈՎ

Отг. - Редакторъ: Арамъ Гурбетянъ
Տպարան «ԱՐԱՐԱՏ» Հր. Պոթէֆ 224—Սօֆիա